

**5.14. 2007թ. դեկտեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2007թ. դեկտեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Դեկտեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների և Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետի միջոցով:

Մթնոլորտային օդի 3449 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի, էթիլ բենզոլի, քլորոպրենի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների, 2007թ. դեկտեմբեր**

(միավոր)

	Դիտակայանների քանակը	Դիտակետերի քանակը	Փորձանմուշների քանակը
Երևան	5	-	1700
Արարատ	1	-	71
Ալավերդի	2	-	528
Վանաձոր	3	-	971
Գյումրի	1	-	24
Հրազդան	1	-	71
Ծաղկաձոր	-	14	84
<b>ԸՆդամենը</b>	<b>13</b>	<b>14</b>	<b>3449</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2.4 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2007թ. դեկտեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	1.04	0.26	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.16	0.05	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.293	0.082	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.19	0.05	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.055	0.022	0.16	0.03
Բենզոլ	0.436	0.060	1.5	0.1
Տոլուոլ	3.543	0.543	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
Էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02
Քլորոպրեն	0	0	0.02	0.002

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.3 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.6 անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ նվազել 1.3 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2007թ. դեկտեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.92	0.24	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.81	0.06	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.130	0.043	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.07	0.03	0.40	0.06
Բենզոլ	0.453	0.091	1.5	0.1
Տոլուոլ	1.551	0.507	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
Էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական և միանվագ առավելագույն կոնցենտրացիաները ՍԹԿ-ները գերազանցել են 1.5-ական անգամ: Նույնները ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 2.1 անգամ:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում նույնները ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Ալավերդու մթնոլորտային օդում, 2007թ. դեկտեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.16	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.89	0.61	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.092	0.070	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.07	0.06	0.40	0.06

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 5.5 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 6.9 անգամ: Նույնները ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է 8.2 անգամ ցածր ՍԹԿ-ից, ազոտի երկօքսիդինը՝ 8.5 անգամ:

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Դեկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 10 գետերից և Երևանյան լճից: Վերցված 24 փորձանմուշներում որոշվել է 20-26-ական ցուցանիշ: Դիտարկման արդյունքներն ըստ մակերևութային ջրերի վերահսկվող հատվածքների և աղտոտիչ նյութերի, ստացել են հետևյալ պատկերը.

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2007թ. դեկտեմբեր

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	միտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	4	Վանաձոր քաղաքից 4.5 կմ ներքև	4.58	-	2.50	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	0.030	-	-
	6	Այրուն քաղաքից 0.5 կմ վերև	-	0.052	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	0.057	-	-
Չորագետ	10	Գետաբերան	-	-	0.55	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	-	0.51	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	623.1
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	0.048	-	166.1
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	0.062	-	175.5
Սևջուր	40	Վաղարշապատ քաղաքից 10 կմ հարավ	-	0.038	-	297.0
	41	Վաղարշապատ քաղաքից 11 կմ հարավ-արևելք	-	0.043	-	339.0
	42	Ռանչյապր գյուղից 0.5կմ ներքև	-	0.046	-	278.3
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	0.029	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	5.40	0.139	6.72	147.4
	56	Գետաբերան	-	0.082	0.51	212.9
Գետառ	59	Գետաբերան	3.60	0.211	2.91	133.4
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	0.053	-	110.0